ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐԸ
(9-ը մայիսի, 1945)

Մեր սուրը փաղքով դրեցինք պատյան,—
Մեծ հաղթանակի օրն է ցնծալից.
Պարտվեց մահաշունչ ոսոխը դաժան,
Երգեր են հորդում զվարթ սրտերից:

Հոծ փողոցներում աղմուկ ու շառաչ,
Հոսում են մարդիկ ծափով, ծիծաղով,
Մի մարդ սեղան է բացել տան առաջ,
Լցրել թասերը ոսկեփայլ գինով:

Եվ անցորդներին կանչում է, խնդրում,—
Եղբայրնե՛ր, որդուս կենացը խմե՛նք.
Հերոս է որդիս, հաղթեց թշնամուն,
Ձեր որդիների կենացն էլ խմենք:

Խմում են խինդով, ցնծում երջանիկ,
Եվ զարկում նորից գավաթներն իրար:
Նրանց մեջ մի հայր ասում է մեղմիկ.—
Է՛ս էլ իմ որդու հանգստյան համար:

Գլխարկներն իսկույն հանում են նրանք,
Խոր ակնածանքով լռում են մի պահ.
Խմում են անձայն զոհվածի համար
Եվ հեղում գինին սուրբ հացի վրա:

1945

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՏԱՂ ՎԵՐԱԴԱՐՁԻ

Մեր գորգերը՝ ձեր ճամփեքին,
մեր ծաղկունքը՝ ձեր ոտքի տակ,
Ու ձեր երթին, ոնց փառքի ջահ՝
արարատյան արև՛ը բարկ,
Ձեր հաղթական վերադարձին՝
մեր երկինքը՝ հաղթականամար,
Դեպի հնոց երկիրն հայոց,
հայո՛ց քաջեր, բարո՛վ եկաք:

Ձեզ են գալի կարոտալի
հայոց հովերն ամեն կողմից,
Ձեզ են փարվում մանկութ ընկեր,
ծանոթ գետերը ցնծալից.
Ձեզնով հպարտ, երախտապարտ՝
հայոց հողը ծաղկել նորից,
Ձեզ ճամփա՛ է բացել սիրով,
հարազատնե՛ր, բարո՛վ եկաք:

Տեսե՛ք, ձեր թուխ մանուկնե՛րն են
ձեր դեմ վազում՝ հովերի հետ,
Աղջիկների հայացքները
ձե՛զ են փնտրում երջանկավետ.
Վշտից ցամքած արցունքը մոր՝
խնդությունից դարձել է գետ,
Ձեր մայրերի աչքի՛ն երևեկ,
մոր գիրկը ձեր բարո՛վ եկաք...

Եկեք սրբենք այս չորս տարվա
փոշին հոգնած ձեր ոտքերի,
Ու համբուրենք սպիազարդ
ձեր թուխ ճակատը զինվորի.
Ձեզնի՛ց առնենք կարոտն՝ ընկած
հարազատի ու ընկերի,
Ա՜խ, ում հարկի տա՛կ էլ իջնեք՝
եղբա՛յրն եք մեր, բարո՛վ եկաք:

Սեղա՛ն բացեք, թող խառնվեն
վիշտ ու խնդում, արցունք ու երգ,
Մեր քաջերը կարոտե՛լ են
հայոց գինուն, գինի՛ բերեք.
Հաղթողների փառքի համար
յոթը գիշեր, յոթը ցերեկ
Թող զրնգա՛ն նվագ ու երգ,
հայո՛ց քաջեր, բարո՛վ եկաք...

1945

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

Խաղաղություն ամենքի՛ն և ամենո՛ւր,—
Այդ ենք միայն մենք աշխարհին կամենում:

Խաղաղությո՛ւն, որ խաղողը քաղցրանա,
Որ նորատունկ այգին տա բերք ու բարիք:

Խաղաղությո՛ւն, որ աչիկներն իր բանա
Դաշտում մի տուղտ, օրորոցում՝ մի բալիկ,
Մի ծով ցորեն՝ գարնանային արտի մեջ,
Անգիր մի երգ՝ բանաստեղծի սրտի մեջ,
Մի երեքնուկ՝ բացատի մեջ անտառի,
Անխոս մի սեր՝ սրտի խորքում պատանի...

Խաղաղություն օվկիանոսին այն խաղաղ,
Որ իսկապե՛ս լինի հանգիստ ու խաղաղ:
Խաղաղություն բոլո՞ր նրանց, ում համար
Ծանր է տեսնել սգավոր կին, քույր ու մայր,
Ծանր է տեսնել իր քաղաքը մոխրացած,
Այգին դարձած խրամատի անել ցանց...

Խաղաղությո՞ւն: Ո՞վ է կռիվ կամենում,—
Լոկ այս հարցն է, որ հնչում է ամենուր:

Պատասխանը միևնույնն է ամեն տեղ.
—Ո՛չ,—ասում է ամեն երկիր, ամեն ցեղ:

—Ո՛չ,—հնչում է ամեն լեզվով՝ մի բառով:
—Ո՛չ,—հնչում է կերտող մուրճի բարբառով:
Այգին ջրող բահը նույնն է պահանջում,
Նույնն է տենչում զուլալ հոսող ամեն ջուր,
Նույնն է ճչում ամեն մանուկ նորածին,
Նույնն է ասում լուռ հպումը սիրածի...

Խաղաղություն ամենքի՞ն և ամենո՛ւր,—
Ողջ աշխարհն է ողջ աշխարհին կամենում:

1949

ՄԱՐԿ ՌԻԺԿՈՎ
(Սվերդլովսկ)

ԱՊՐԻԼ

Հայ մարդու հոգում, հիշողության մեջ
Այս վերքը բերդ է դարձել անառիկ.
Ոչ մի ուրիշ թիվ, ուրիշ վերք ու վեհ
Չի կարող ջնջել թիվը՝ տասնհինգ...
Իսկ ես, ես՝ ծնված երեսունհինգին,
Ես մի ռուս մանչուկ՝ հեռվում մեծացած,
Սոսկ հիմա հասան իմ ջահել ունկին
Այս բոթ-բառերը՝ «եղեռն, կոտորած»...
Գնդակը՝ պայթած տասնհինգ թվին,
Սոսկ հիմա խոցեց սիրտս անապակ.
Անե՛ծք, բյուր անե՛ծք դահճին այն վայրագ,
Անեծք՝ անվանը, անեծք՝ աճյունին...
Իսկ Հայաստանը, նա ապրո՛ւմ է, կա՛
Իսկ Հայաստանը՝ պատանու մի սիրտ.
Բիրտ ուժը արդեն անուժ է հիմա,
Սիրուց են ծնվում մանուկները միշտ:

Բայց հայի հոգում խոր գծվում է դեռ
Սուրբ Կոմիտասի խաչակիր ուղին,
Գծվում է, ձգվում սերունդների դեմ,
Որ քայլեն զգաստ, որ քայլեն ուղիղ,
Որ կյանքով հաղթեն դավին ու մահվան,
Որ երկրպագեն արարիչ լույսին...
...Հին խաչքարերը ծերերի նման
Հանդարտ պատմում են հավերժի մասին...
Իսկ եթե նորի՛ց թռչուններն այստեղ
Թևածեն ահից ենթգ տարաժամին,
Ու նորից իջնի աղետ մի ահեղ
Իմ նո՞ր, նո՞ր գտած իմ Հայաստանին,—
Երդվում եմ, վկա այս հողը արդար,
Ես ել կդառնամ զինվորը նրա,
Ու թե հարկ լինի՝ կընկնեմ իր համար
Իր տաք, վիրավոր քարերի վրա...

Թարգմանությունը՝ **Սիլվա Կապուտիկյանի**